

ԲՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բարայաջուր :

ԲՅԵՆՈՎ բնալոյծները ոսկին մետաղներու թագաւոր անուանելով, ոսկին լուծող ժանտաջրին ալ անունը թագաւորական ջուր՝ կամ արքայաջուր դրին :

Երանալու է որ արքայաջուրը մասնաւոր տեսակ թթուութեամբ է, հապա երկու զանազան թթուութեաներու բաղադրութիւն . ինչպէս 15 կրամ բորակային թթուութեամբ մէջ կտոր մը ոսկի ձգելով կը տեսնես որ ամենեւին չլուծուիր . նմանապէս երեսուն կրամ ջրաքլորեան¹ թթուութեամբ մէջ ալ ոսկի կտոր ձգելով չլուծուիր . բայց երբոր աս երկու թթուութեաները իրարու խառնես ու ոսկին մէջը ձգես, աս աւտեն կը տեսնես որ շուտ մը քիմիական գործողութիւնը կը սկսի . ջուրը կեռայ մանր պղպաղակներով, ոսկին կը լուծուի, և ջրին գոյնը կը սկսի դեղնիլ : Եւ բաղադրութիւնն է՝ որով միայն կրնայ ոսկին լուծուիլ : Իսկ թէ ինչէն է որ աս երկու թթուութեաները զատ զատ չեն կրնար ոսկին լուծել, ու բաղադրութեամբ կրնան, պատճառը աս է որ ինչպէս ուրիշ անգամ զուրցեցինք՝ մարմինները իրարու հետ բաղադրուելով քիմիական ձգողութիւննին միշտ կը փոփոխի . աս դիպուածիս մէջ ալ բաղադրութեամբ քիմիական ձգողութիւննին կաւելնայ . անանկ որ խառնուած ջուրը՝ ոսկին տեսնելուն պէս՝ թթուածին կազը ջրածնին հետ կը միանայ, և քլորը աւելի ձգողութիւն ունենալով ոսկիին հետ՝ անոր մասունքը կը լուծէ :

Եւ ոսկեխառն ժանտաջուրը կաշին կարմիր կը ներկէ, և ասոր ջրախառնը կը գործածուի բուրդը կամ մազը շաքանակի գունով ներկելու :

1 Գ. Ջ. Eau régale. ՏՃ. Եւրոպ :

2 Գ. Ջ. Hydrochlorique.

Բարձրի բորակային :

() ԲԱԳՐԻՍ մէջ շատ անգամ յիշուած ըլլալով արծաթի բորակութեամբ, արծաթն է որ հոս համառօտ մը զուրցենք թէ ինչպէս կը շինուի և ինչ բանի կը գործածուի :

Ջրախառն բորակային թթուութեամբ մաքուր ու զուտ արծաթը լուծելէն ետքը, պէտք է թողուլ արեւի մէջ որ ջուրը ցնդի, ու արծաթի հետ միացած թթուութիւնը (որ արծաթի դոսիտ ալ կը սուսի) ամանին տակը նստի բիւրեղացած . աս բիւրեղներն են բորակութեամբ արծաթ կամ արծաթի բորակութեամբ ըսուածը : Եւ իսկայ գործածելու համար պէտք է ամանին մէջէն հանել, ու վրան քիչ մը մաքուր ջուր լեցընել որ հալի :

Բորակութեամբ արծաթը անգոյն, դառնահամ, թթու և սաստիկ այրող կը լլայ . աս ետքի յատկութեամբը դժոխային քարը՝ կը շինուի, որ բժշկականութեան մէջ շատ կը գործածուի վերքերն ու փտութիւնները այրելով ողջացընելու : Եւ յատկութիւնն ալ աս է որ ջրով հալած բորակութեամբ արծաթը՝ ճերմակ թղթի կամ լաթի վրայ քսելով, ան տեղը արեւու լոյս տեսնելուն պէս կը սենայ : Եւ յատկութեամբն ալ կը գործածուի լաթերու և հագուստներուն ծայրը նշան դնելու, մուշտակները սամուրի գունով ներկելու, և լուսանկար պատկերքներ հանելու . աս ետքինին վրայ կը խոստանանք ուրիշ անգամ տեղն ի տեղը խօսելու . միայն մեր հիմակուան ըսելիքն ան է որ բորակութեամբ գործածելու համար շատ զգուշութիւն պէտք է ընել, վասն զի սաստիկ այրող ըլլալով փնասն ալ մեծ է . և մարդ քանի մը կաթիլ կը լցնէ անտարակոյս կը մեռնի :

1 Գ. Ջ. Nitrate d'argent.

2 Գ. Ջ. Acide nitrique.

3 Գ. Ջ. Pierre infernale. ՏՃ. Եւրոպ :